ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի «Գեղակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ–ի տեխնոլոգիա 9 դասաժամ, կերպարվեստ 8 դասաժամ, մաթեմատիկա 37 դասաժամ, ինֆորմատիկա 9 դասաժամ, աշխարհագրություն 10 դասաժամ, շախմատ 5 դասաժամ առարկայի ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

–դիմում /Ձե 1/, մեկ լուսանկար 3Х4 չափի,

–բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,

–անձը հաստատող փաստաթուղթ,

–«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

–ինքնակենսագրություն /Ձև 5/

–այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

–ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

–հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,

–որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված համապատասխան փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են

թերություններ, մասնակիցը կարող է մինչև ընդունման ժամկետի ավարտը համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը։

Փաստաթղթերը ընդունվում են սեպտեմբերի 6–ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00–ից 15:00–ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22–ին՝ ժամը 14:00–ին, ՀՀ Արմավիրի մարզի Խոյ՝ Գեղակերտ, Մաշտոցի 22։ Հեռախոս 055296594

«Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության

տնօրեն՝ Անուշ Համբարձումյան

01.09.2023թիվ